ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

«26» օգոստոսի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՋԻ ԹԻ ԷՍ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ», «ԹԱՄՍԱՄ» և «Տ.Տ.Տ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) կողմից իրականացվել է «ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների ձեռքբերման թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/36 ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որի արդյունքում հաղթող մասնակից է ճանաչվել «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Թամսամ» ՍՊԸ և «Տ.Տ.Տ.» ՍՊԸ ՀԳ-ն

Հիմնադրամի և «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Թամսամ» ՍՊԸ և «Տ.Տ.Տ.» ՍՊԸ ՀԳ-ի միջև 2024 թվականի մարտի 28-ին կնքվել է «ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների պետական գնման թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/36 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Սույն թվականի հունիսի 10-ին Հիմնադրամում ստացվել է ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ նաև Ծառայություն) թիվ Ե/1399-24 գրությունն, ըստ որի՝ Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ Ընթացակարգի ժամանակահատվածում «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի տնօրենը՝ Վազգեն Պողոսյանը, հանդիսացել է նաև «Վիգմետ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատերը և տնօրենը:

Ընթացակարգի մրցույթի հրավերով սահմանված է եղել հետևյալ պահանջը. «2.3 Մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
(37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
(37410) 247 123

ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:

Միևնույն ժամանակ, մրցութային հայտով «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Թամսամ» ՍՊԸ և «Տ.Տ.Տ.» ՍՊԸ ՀԳ-ն ներկայացված Դիմում-հայտարարությամբ նշել է հետևյալը. «Սույնով «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Թամսամ» ՍՊԸ և «Տ.Տ.Տ.» ՍՊԸ ՀԳ-ն հայտարարում և հավաստում է, որ 1) «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Թամսամ» ՍՊԸ և «Տ.Տ.Տ.» ՍՊԸ ՀԳ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/34 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին (...)»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ) իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի (...):

Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

2024 թվականի մարտի 28-ին կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների պետական գնման թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱԾՁԲ-2024/36 պայմանագիրը Հիմնադրամի կողմից միակողմանի լուծվել է, և այդ մասին ծանուցումը տեղադրվել է համապատասխան /https://gnumner.minfin.am, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ/ կայքում 14.08.2024 թվականին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում (...):

Վերը նշված իրավական նորմերի բովանդակային վերլուծությունից բխում է, որ գնման ընթացակարգի շրջանակում առաջնահերթ է մասնակցի ստանձնած պարտավորության խախտման արձանագրումը, որից հետո կարող է վրա հասնել որոշակի իրավական հետևանք՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ընդգրկելու մասին պատճառաբանված որոշում կայացնելու ձևով:

Այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ընդգրկելու համար անհրաժեշտ է միաժամանակյա երկու պայմանների առկայություն, երբ՝

1. առկա է գնման գործընթացի շրջանակում ստանձնած կամ պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը խախտվել է և հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը,

2. մասնակցի կողմից հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի ապահովման, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները չեն վճարվել:

Այս առնչությամբ մասնակցին գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում վերագրելու համար անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նման պայմաններում Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը թվարկում է բոլոր այն դեպքերը, որոնցից թեկուզև մեկի առկայությունը բավարար է մասնակցի վարքագիծը՝ որպես պարտավորության խախտում որակելու համար:

Այսպիսով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է նաև այն մասնակիցը, որը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի ապահովման, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները չի վճարել: Նման պարագայում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարի կողմից կայացվում է պատճառաբանված որոշում՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Տվյալ դեպքում, Մասնակիցը մասնակցել է թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/36 ծածկագրով գնման ընթացակարգին, ճանաչվել հաղթող և վերջինիս հետ կնքվել է պայմանագիր, սակայն հետագայում պարզվել է, որ Մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:Ընդ որում եթեարձանագրված խախտումները հայտնի լինեին մինչև պայմանագրի կնքումը, ապա հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Միևնույն ժամանակ, Ընկերության կողմից չեն վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Այսպիսով, ամբողջ վերոգրյալից ելնելով՝ հարկ է արձանագրել, որ թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/36 ծածկագրով գնման ընթացակարգի առնչությամբ առկա է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական և իրավական անհրաժեշտ բոլոր հիմքերը, որոնք նախատեսված են «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և նույն հոդվածի 2-րդ մասը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02285371), «Թամսամ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05205033) և «S.S.S.» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00886237) ընդգրկել «Գնումների

մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումն ընդունելուն հաջորդող օրը տրամադրել լիազոր մարմնին և դրա մասին ծանուցել «Ջի Թի Էս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, «Թամսամ» ՍՊԸ-ին և «S.S.S.» ՍՊԸ-ին:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
(37410) 247 123

K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
(37410) 247 123